զԲաղաքապետն և զոմանս յայլազգեաց, և կամէին բռնի գործել զամենայն ինչ և վարել անտի զՀայս։ Բայց Դատաւոր քաղաքին ընդդէմ եկաց նոցա թէ՝ այսու հրամանաւ ոչ կարեմ առնել ինչ, միայն պատուիրեմ Հայոց չարգելուլ զսովորական կանոնս և զպատարագն ձեր, որպէս ոչ արգելին մինչեւ ցայսօր։ Լատինք խնդրեցին գիր 'ի Դատաւորէն սակս չկատարելոյ զհրաման Արքայի, եւ նա գրեաց ըստ մտաց հրովարտակին մին՝ 'ի Դուռն Տէրութեան և միւսն առ Փոխարքայն Եգիպտոսի, յորս 'ի վերջոյ յաւելոյր թէ՝ Լատինք ցանկային և խնդրէին կործանել զբովանդակ չինուածս Հայոց՝ և միայն ինքեանց սեփհականել զտեղին, այլ հայեցեալ 'ի զօրութիւն հրովարտակին՝ որ 'ի ձեռս նոցա, չհամարձակեցայ տալ կործանել զայնս, (١٢٥٣ յԱ Ռէպիլ էվվէլ ամսոյ)։

ԳԼՈՒԽ ԾԳ.

Գրեանք Դատաւորին առեալ Հայոց։ Բողոք Լատինաց։ Ի Ժողովն քննութիւն խնդրոց երկուց ազգաց։ Վաւերական թղթեանք Հայոց։ զոր մատուցին 'ի Ժողովն։ Խորհուրդ Ամիրայից եւ Նամակ նոցին առ Պօղոս Եպիսկոպոս վասն խնդրոյ իրիք։

ՏԵՍԵԱԼ Հայոց զմեծարանութիւնս և զսրոխտանս Լատինաց՝ և զանհանդիստ աշխատութիւնս նոցին, առին Իլամ 'ի Դատաւորէն, յորում եռուն պատմել զբովանդակութիւն գործոյն 'ի սկզբանէ մինչեւ ցվախճան, յայտ առնելով եւ զընդդիմութիւնս Լատինաց, եւ առաքեցին զայն ընդ Սարկաւագ Սարգսի 'ի Կոստանդինուպոլիս 'ի վերայ Եգիպտոսի, և զՀէօճճէթն այլ ճանապարհաւ ընդ Սարկաւագ Յովսէփայ, զի հնարեսցեն Գլխաւորք ազգին առնուլ հրովարտակ սակս անկործան մնալոյ չինուածոց, և իւրաքանչիւր ազգաց ըստ առաջին սովորութեան կատարել զպաշտամունս, զի 'ի կողմանէ Հայոց երբէք չէ լեալ ընդդիմութիւն՝ այլ յարգանք եւ պատիւ։